Հուշաթերթ-հրահանգ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները քվեարկության օրը

Հուշաթերթ-հրահանգը նախատեսված է այն ընտրական տեղամասերի համար, որտեղ քվեարկությունն անցկացվում է էլեկտրոնային միջոցների կիրառմամբ:

Վրաստանի Խորհրդարանի 2024 թվականի հոկտեմբերի 26-ի ընտրություններ

Տվյալ ռեսուրսը պատրաստվել է ՀԻԻԱ Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսումնական կենտրոնի կողմից։

Փաստաթուղթն օժանդակ ռեսուրս է և նպատակ է նախանշում նպաստել քվեարկության օրը հանձնաժողովի նախագահի՝ կազմակերպված և հետևողական գործունեության ծավալմանը։

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունների և գործունեության կարգի հետ կապված օրենսդրական կարգավորումներին ամբողջական տեսքով ծանոթանալու համար տեսե՛ք «Վրաստանի ընտրական օրենսգիրք» Վրաստանի օրգանական օրենքը և «Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների Ուղեցույց հրահանգը» (հաստատվել է ԿԸՀ 2024 թվականի օգոստոսի 16-ի N36/2024 որոշումով)։

Թեմատիկ Բովանդակություն

01 Ինչպես պատրաստվենք քվեարկության գործընթացը սկսելու համար 2

02 Ինչպես կառավարենք քվեարկության ընթացքում առաջացած ռիսկերը 17

03 Ինչպես կառավարենք ընտրողների ստուգման և ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերի աշխատանքի ընթացքում հայտնաբերված տեխնիկական թերությունները 22

04 Ինչպես պատրաստվենք շարժական քվեատուփով քվեարկության գործընթաց սկսելու համար և ինչ պետք է նախատեսենք շարժական քվեատուփը ընտրատեղամաս վերադարձնելու ժամանակ 24

05 Ինչպես և ինչ պարբերականությամբ հաշվառենք քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը (ընտրողների ակտիվությունը) 26

06 Ինչպես պատրաստվենք քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացին 30

07 Ինչ պետք է նկատի ունենանք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության առնչությամբ 53

Ուղեցույց հրահանգում ամրագրված գործունեությունները կատարելուն զուգահեռ քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց համար բարձրաձայն հնչեցրե՛ք Ձեր կողմից իրականացվելիք ընթացակարգը։

01
Ինչպես պատրաստվենք քվեարկության գործընթացը սկսելու համար

Ընտրատեղամասը բացելուց մինչև քվեարկության մեկնարկը (ժամը 06:45-ից մինչև 08:00-ն) իրականացվելիք ընթացակարգերի կազմակերպված անցկացումը կապված է հետևյալ հիմնական աշխատանքների կատարման հետ.

- ✓ բացել ընտրատեղամասը և իրազեկել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,
- ✓ ստուգել հավատարմագրման վկայականները՝ ընտրատեղամասում գտնվելու իրավունք ունեցող անձանց տեղամաս ներս թողնելու համար, ապահովել գրառում գրանցամատյանում,
- ✓ հայտարարել տվյալները (ստացված ընտրական քվեաթերթիկների, հատուկ շրջանակ- ծրարների և բոլոր տեսակի ցուցակներում գրանցված ընտրողների թիվը),
- ✓ ակտիվացնել ընտրողների ստուգման սարքը, ապահովել նախնական հաշվետվությունների և ընտրողների ցուցակների տպում,
- ✓ ակտիվացնել ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքը և ապահովել զրոյական քաղվածքի տպում,
- ✓ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին իրենց գործառույթին համապատասխան փոխանցել անհրաժեշտ նյութերն ու պարագաները:

Ժամը 06:45-ից մինչև 08:00-ն իրականացվելիք ընթացակարգերի համար առաջնորդվե՛ք ստորև տրված մանրամասն նկարագրությամբ:

Ժամը 06:45-ից մինչև 08:00-ն իրականացվելիք հիմնական գործունեությունների մանրամասն նկարագրություն

- ☐ Ժամը 06:45-ին բացե՛ք ընտրական տեղամասը, հեռախոսով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին տեղեկացրե՛ք ընտրական տեղամասը բացելու և հանձնաժողովի անդամների քվորումի մասին:
- ☐ Հանձնաժողովի քարտուղարին փոխանցե՛ք գործավարության մատյանը:
- ☐ Ստուգե՛ք քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց հավատարմագրման վկայականները (ուժի մեջ է անձը հաստատող վկայականի հետ):
- ☐ Ցուցո՛ւմ տվեք հանձնաժողովի քարտուղարին, որ հանձնաժողովի անդամների միջև գործառույթների բաշխման արդյունքները, որոնք արտացոլված են մինչև քվեարկության օրը կայացած վիճակահանության արդյունքների ակտում, մուտքագրի գործավարության մատյանում:
- ☐ Ի ցույց բոլորի, ստուգե՛ք այն փաթեթի ամբողջականությունը, որում գետեղված է հանձնաժողովի հատուկ կնիքը, և բացե՛ք այն:
- ☐ Հայտարարե՛ք ընտրողների թիվը ընտրողների միասնական ցուցակում, ընտրողների հատուկ ցուցակում և շարժական քվեատուփի ցուցակում (այսպիսինի առկայության դեպքում):
- ☐ Հայտարարե՛ք ստացած քվեաթերթիկների և քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարների քանակությունները:
- ☐ Մինչև ընտրողների ստուգման սարքերի ակտիվացումը ստուգե՛ք, թե հնարավոր է արդյոք այս սարքերն ակտիվացնել առանց հատուկ անհատական կոդի մուտքագրման:
- ☐ Ընտրողներին ստուգող սարքերի մեջ ակտիվացրե՛ք ընտրողների ստուգման գործընթացը և յուրաքանչյուր սարքից տպե՛ք նախնական հաշվետվությունը: Տպված նախնական հաշվետվությունները փոխանցե՛ք հանձնաժողովի քարտուղարին պահպանելու համար:

Սխեմա N1. Սարքերում ստուգման գործընթացը բացելու փուլերի նկարագրդում

{I} Կոճակը սեղմելով ակտիվացրե՛ք սարքերում ներբեռնված ծրագիրը։



{II} Սարքերում սկսում է ներբեռնվել ծրագիրը, տևում է մի քանի վայրկյան։

{III} Սարքերի միջև համաժամացումը հաստատվում է պատկերակների կանաչ գունավորումով: Թվային խորհրդանշանը ցույց է տալիս կապակցված սարքերի քանակը:

Ստուգման գործընթացը բացելու համար սարքերի մեջ մուտքագրե՛ք անհատական կոդը:



{IV} Սեղմելով «Բացել ստուգումը» կոճակը՝ բացում եք ստուգման գործընթացը սարքերում:

Բացումը հաստատելու համար կրկնական մուտքագրե՛ք անհատական կոդը:

{V} Ստուգման գործընթացը բացելուն պես սարքերից ավտոմատ կերպով տպվում է նախնական հաշվետվություններն արտացոլող կտրոնը:

{VI} Սեղմելով «Լավ» կոճակը՝ հաստատե՛ք քվեարկության գործընթացի բացումը:



- Ընտրողների ստուգման սարքերում ստուգման գործընթացն ակտիվացնելուց հետո ընտրողների գրանցում իրականացնողներից որևէ մեկին ցուցո՛ւմ տվեք, որ նա իրեն փոխանցված ստուգման սարքից տպի ընտրողների ցուցակը:

Սխեմա N2. Ստուգման սարքից ընտրողների ցուցակը տպելու գործընթացի նկարագրադում

{I} Ընտրողների ցուցակը տպելու մենյու տեղափոխվելու համար գրանցում իրականացնողը սեղմում է «Վերադառնալ մենյու» կոճակը:

{II} Գրանցում իրականացնողը սեղմում է «Ընտրողների ցուցակ» կոճակը:



{III} Գրանցում իրականացնողը սեղմում է «Տպել» կոճակը և արդյունքում տպվում է ընտրողների ցուցակը։



- Ստուգման սարքից տպված ընտրողների ցուցակը ցուցադրական արձանագրության հետ փակցրե՛ք երևացող տեղում։
- Ստուգե՛ք և համոզվե՛ք, որ քվեատուփերը դատարկ լինեն։ Անհատական համար ունեցող կապարակնիքներով կնքե՛ք հիմական քվեատուփերը և շարժական քվեատուփը (այսպիսինի առկայության դեպքում)։
- Հիմական քվեատուփի վրա տեղադրե՛ք ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերը։
- Քվեատուփերը կապարակնքելուց հետո, հատուկ բանալու և անհատական կոդի կիրառմամբ ակտիվացրե՛ք ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերում ներբեռնված ծրագիրը։

Սխեմա N3. Ձայները հաշվելու հատուկ սարքերում քվեարկության գործընթացը բացելու և սարքերից «զրոյական քաղվածքներ» տպելու գործընթացի նկարագրությունը

{I} Սարքերի մեջ ներբեռնած ծրագիրը ակտիվացնելու համար հատուկ բանալին տեղադրե՛ք սարքերի կորպուսի վրա եղած ճեղքի մեջ:



{II} Սարքերի մեջ սկսվում է ծրագրի ներբեռնումը, տևում է մի քանի րոպե:

{III} Քվեարկության գործընթացը բացելու նպատակով սարքերի էկրանի վրա ընտրե՛ք «Նախագահ» կոճակը։

{IV} Սարքերի մեջ մուտքագրե՛ք անհատական կոդը։



{V} Սարքերի էկրանի վրա ընտրե՛ք «Բացել քվեարկությունը»: Բացելը հաստատելու համար կրկնական մուտքագրե՛ք անհատական կոդը:



{VI} Քվեարկությունը բացվելուն պես սարքից ավտոմատ ռեժիմում տպվում է «զրոյական քաղվածք»՝ ի ապացույց նրա, որ սարքի միջոցով ոչ մի ընտրող չի քվեարկել:



{VII} Սեղմելով «Սկսել քվեարկությունը» կոճակը՝ հաստատե՛ք քվեարկության գործընթացը բացելը:

- Հանձնաժողովի քարտուղարի հետ ստորագրությամբ հաստատե՛ք ձայների հաշվման հատուկ սարքերից տպված «զրոյական քաղվածքները» և պահպանման փոխանցե՛ք հանձնաժողովի քարտուղարին:
- Հանձնաժողովի քարտուղարի հետ քվեարկության օրվա գործավարության մատյանում տորագրությամբ հաստատե՛ք դատարկ քվեատուփերի կապարակնքման փաստը և քաղվածքում տրված տեղեկությունն այն մասին, որ այդ պահի դրությամբ ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի միջոցով ոչ մի ընտրող չի քվեարկել:
- Որպեսզի ստուգեք, որ ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքը չի ընդունում քվեաթերթիկն առանց հատուկ շտրիխ-կոդի և անհատական QR կոդի, տվյալ սարքերի մեջ ներմուծե՛ք առանց հատուկ շտրիխ-կոդի և անհատական QR կոդի քվեաթերթիկի ֆորմատի թուղթ:
- Գրանցում իրականացնող հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի փոխանցե՛ք.
  - 50 հատ քվեաթերթիկ (գրանցում իրականացնողի կողմից քվեաթերթիկները վերահաշվելուց հետո, նրա հետ ստորագրե՛ք հանձնման-ընդունման ակտը),

- քվեաթերթիկը լրացնելու հատուկ նշիչ,
- հատուկ շրջանակ-ծրարներ,
- նշմարման հեղուկ,
- գրիչ,
- ընտրողների ստուգման սարքից տպված՝ ընտրողների ստուգումը հաստատող կտրոնների զետեղման համար հատկացված անթափանց տուփ (մինչև փոխանցումը պետք է անհատական համար ունեցող կապարակնիքով կապարակնքեք տվյալ տուփը)։
- Գրանցում իրականացնողներից մեկի սեղանին տեսողության խնդիրներ ունեցող ընտրողների համար տեղադրե՛ք խոշորացնող ոսպնյակ, ինչպես նաև՝ հատուկ շրջանակ տեսողությունից զուրկ ընտրողների համար (եթե այդպիսիք կան)։

- Հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամին փոխանցե՛ք

  նշմարումը ստուգող ուլտրամանուշակագույն լապտեր։

- Քվեատուփը և ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքը վերահսկող տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալին ցուցո՛ւմ տվեք տեղ զբաղեցնել հիմնական քվեատուփի և ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի մոտ։ Անհրաժեշտության դեպքում գործառույթի իրականացումը հանձնարարե՛ք նաև հանձնաժողովի մեկ այլ անդամի։

- Մինչև քվեարկության գործընթացը սկսելը ակտիվացրե՛ք պլանշետի մեջ ներբեռնված ԿԸՀ հավելվածը։

Պլանշետի մեջ ներբեռնված ԿԸՀ հավելվածի ակտիվացման նկարագրությունը տե՛ս՝ էջ 17, Սխեմա N4։

Սխեմա N4. Պլանշետի մեջ ներբեռնված ԿԸՀ հավելվածի ակտիվացման գործընթացի նկարագրադում

{I} Պլանշետի մեջ ներբեռնված ԿԸՀ հավելվածն ակտիվացրե՛ք՝ սեղմելով պատկերակը։

{II} Անցե՛ք ավտորիզացում։ Այդ նպատակով համապատասխան դաշտերում մուտքագրե՛ք սիմ-քարտի համարը, ընտրական տեղամասի համարը և սեղմե՛ք «Ուղարկել կոդը» կոճակը։

{III}

Կարճ տեքստային հաղորդագրությամբ ստացված կոդը մուտքագրե՛ք «Մեկանգամյա կոդ» դաշտում և սեղմե՛ք «Մուտք գործել» կոճակը:

- Ընտրական տեղամասում քվեարկության գործընթացը սկսվում է ժամը 08:00-ից: Առաջին ընտրողի կողմից գրանցումն անցնելուց հետո ԿԸՀ-ին պլանշետի միջոցով տեղեկացրե՛ք քվեարկության գործընթացը սկսելու մասին:

  Պլանշետի մեջ ներբեռնված ԿԸՀ հավելվածի միջոցով քվեարկությունը սկսելու մասին տեղեկությունը փոխանցելու գործընթացի նկարագրությունը տե՛ս՝ էջ 19, Սխեմա N5:

Սխեմա N5. Պլանշետի մեջ ներբեռնված ԿԸՀ հավելվածի միջոցով քվեարկությունը սկսելու մասին տեղեկությունը փոխանցելու գործընթացի նկարագրությունը



{I}

Գործընթացը սկսելու մասին ԿԸՀ-ին տեղեկացնելու համար սեղմե՛ք բացվող համատեքստային մենյուն:

{II}

Ծրագրի մենյուի մեջ սեղմե՛ք «Ակտիվություն» կոճակը:

{III}

Սեղմե՛ք «Բացել» կոճակը: Կոճակը նշելուն պես տեղեկությունը կուղարկվի ԿԸՀ:

02
Ինչպես կառավարենք քվեարկության ընթացքում առաջացած ռիսկերը

- ✓ Եթե նշմարումը ստուգող հատուկ սարքը պարզում է, որ ընտրողն արդեն ունի նշմարում, նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը: Հոսքը կարգավորողն ընտրողին բացատրում է ընտրատեղամաս մտնելը մերժելու պատճառը, իսկ ընտրողի տվյալները հաղորդում է հանձնաժողովի քարտուղարին՝ գործավարության մատյանում գրանցելու նպատակով:
- ✓ Եթե ընտրողը գրանցում իրականացնողին ներկայացնում է Վրաստանի քաղաքացու անձը հաստատող ժամկետանց փաստաթուղթ կամ Վրաստանի քաղաքացու ուժը կորցրած ոչ էլեկտրոնային անձը հաստատող վկայական (մինչև 2011 թվականի հուլիսի 27-ը ներառյալ տրված ոչ էլեկտրոնային վկայականն ուժը կորցրած է), նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը, գրանցում իրականացնողն ընտրողին բացատրում է քվեարկությանը նրա մասնակցությունը մերժելու պատճառը և նշում, որ նրան թույլ կտրվի մասնակցել քվեարկությանը, եթե նա ներկայացնի գործող անձը հաստատող փաստաթուղթ:
- ✓ Եթե ընտրողը գրանցում իրականացնողին ներկայացնում է Վրաստանի քաղաքացու անձնագիր կամ Վրաստանի քաղաքացու ոչ էլեկտրոնային անձը հաստատող վկայական, գրանցում իրականացնողը ընտրողի տվյալները ձեռքով է որոնում սարքի մեջ:
- ✓ Եթե ստուգող սարքի կողմից ընտրողի տվյալների համապատասխանությունը ստուգելիս հաստատվի, որ ներկայացված փաստաթղթում տվյալ ընտրողի գրանցման տվյալները համապատասխանում են ընտրողների ստուգման սարքի մեջ ներմուծված ընտրողների ցուցակում առկա տվյալներին, սակայն ընտրողների գրանցում իրականացնողն այս ընտրողի դեմքը և ներկայացված փաստաթղթի լուսանկարը միմյանց անհամապատասխան է համարում, տվյալ անհամապատասխանության հարցով նա պետք է դիմի Ձեզ.

- Եթե հաստատեք անհամապատասխանությունը, ապա ցուցո՛ւմ տվեք հանձնաժողովի քարտուղարին քվեարկության օրվա գործավարության մատյանում դրա համար հատկացված էջում անել գրառում (նշելով ընտրողի անունը, ազգանունը և ընտրողների ցուցակում նրա հերթական համարը): Այս գրառումը հանձնաժողովի քարտուղարի հետ հաստատե՛ք ստորագրություններով:
- Եթե չհաստատեք անհամապատասխանությունը, ընտրողների գրանցում իրականացնողն իրավունք ունի գործավարության մատյանում գրել իր առանձնահատուկ կարծիքը: Հանձնաժողովի քարտուղարը քվեարկության օրվա գործավարության մատյանում պետք է անի համապատասխան գրառում (նշելով ընտրողի անունը, ազգանունը և ընտրողների ցուցակում նրա հերթական համարը): Այս գրառումը գրանցում իրականացնողը և հանձնաժողովի քարտուղարը պետք է հաստատեն ստորագրություններով:

Վերոնշյալ դեպքերում հանձնաժողովի քարտուղարը գործավարության մատյանին պետք է կցի իր ստորագրությամբ հաստատված ընտրողի կողմից ներկայացված անձը հաստատող փաստաթղթի ֆոտոպատճենը:

Ընթացակարգերը կատարելուց հետո ընտրողին տվե՛ք քվեարկությանը մասնակցելու իրավունք:

✓ Նշմարման ընթացակարգ անցնելուց հրաժարվելու դեպքում, ընտրողին կարգելվի մասնակցել քվեարկությանը: Գրանցում իրականացնողը նրան պարզաբանում է, որ լքի քվեարկության շենքը:

✓ Եթե ընտրողի ստուգման սարքից չտպվի ընտրողի ստուգումը հաստատող կտրոն կամ տպվի տեխնիկական խոտանով կտրոն, այս դեպքում ընտրողը ստուգումը հաստատող կտրոնի փոխարեն ստորագրում է համապատասխան ակտը, որի ձևաթուղթը լրացնում է հանձնաժողովի քարտուղարը: Գրանցում իրականացնողը ընտրողի կողմից ստորագրված ակտը տեղադրում է ընտրողի ստուգումը հաստատող կտրոնների համար հատկացված տուփի մեջ: Հանձնաժողովի քարտուղարը գրանցամատյանին կցում է տվյալ ընտրողի անձը հաստատող փաստաթղթի ֆոտոպատճենը:

✓ Եթե ստուգող սարքը արձանագրի, որ քվեարկության շենք քվեարկելու համար ներկայացած ընտրողը ներառված է շարժական քվեատուփի ցուցակում, համապատասխան տեղեկությունը հայտնվում է սարքի

էկրանին, միաժամանակ սարքը ձայնային ազդանշան է արձակում:

Ընտրողին արգելվում է քվեարկել ընտրատեղամասում: Գրանցում իրականացնողն ընտրողին բացատրում է, որ համաձայն պահանջի, ընտրողի համար նախատեսված է շարժական քվեատուփով քվեարկության ծառայություն:

✓ Եթե ստուգող սարքը արձանագրի, որ քվեարկության շենք քվեարկելու համար ներկայացած ընտրողն ընդգրկված է մեկ այլ տեղամասի համար հատկացված հատուկ ցուցակում, համապատասխան տեղեկությունը հայտնվում է սարքի էկրանին, միևնույն ժամանակ սարքը ձայնային ազդանշան է արձակում: Ընտրողին արգելվում է ընտրատեղամասում մասնակցել քվեարկությանը: Գրանցում իրականացնողն ընտրողին բացատրում է, որ քվեարկությանը մասնակցելու համար նա պետք է գնա համապատասխան ընտրատեղամաս: Գրանցում իրականացնողն ընտրողին տրամադրում է տեղամասի համարը և հասցեն՝ ստուգող սարքի էկրանին հայտնված տեղեկության հիման վրա:

✓ Եթե ստուգող սարքն արձանագրում է, որ քվեարկության շենք քվեարկելու համար ներկայացած ընտրողն արդեն ստուգված է այս ընտրական տեղամասում, սարքի էկրանին հայտնվում է համապատասխան տեղեկությունը, միևնույն ժամանակ սարքը ձայնային ազդանշան է արձակում: Ընտրողին կարգելվի ընտրատեղամասում մասնակցել քվեարկության: Գրանցում իրականացնողը ընտրողին բացատրում է, որ պետք է լքի քվեարկության շենքը:

✓ Եթե ստուգման սարքն արձանագրի, որ ստուգման սարքի մեջ ներբեռնված ցուցակում ընտրողի մասին տվյալներ չեն գտնվել, հնարավորության սահմաններում ընտրողին օգնե՛ք տեղեկություններ գտնել այն ընտրական տեղամասի մասին, որում նա հաշվառված է:

Սխեմա N6. Պլանշետի մեջ ներբեռնած ԿԸՀ հավելվածի միջոցով ընտրողի տվյալների որոնման գործընթացի նկարագրություն

{I}

Ընտրական ցուցակում անձի որոնման համար ընտրողի անձնական համարը մուտքագրե՛ք «Անձնական համար» դաշտում և ընտրե՛ք «Բեռնել» կոճակը:

{II}

Միասնական ցուցակում ընտրողի գրանցման փաստի հաստատման դեպքում, էկրանի վրա կբացվեն ընտրողի գրանցման տվյալները, այդ թվում ընտրական տեղամասի համարը:

✓ Ընտրողը, որը չի կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, իրավունք ունի գաղտնի քվեարկության խցիկ իրեն օգնելու հրավիրել ընտրատեղամասում գտնվող ցանկացած անձի, բացառությամբ.

ա) ընտրական հանձնաժողովի անդամի,

բ) թեկնածուի,

գ) ընտրական սուբյեկտի ներկայացուցչի,

դ) դիտորդի,

ե) մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցչի:

✓ Եթե ընտրողը փսասել է քվեաթերթիկը, հանձնարարե՛ք գրանցում իրականացնողին ընտրողի փսասված քվեաթերթիկը փոխարինել նորով: Ընտրողի ներկայությամբ փսասված քվեաթերթիկն այնպես ծալե՛ք, որ անհնար լինի տեսնել ընտրական սուբյեկտներին, ծալված քվեաթերթիկը ամրացրե՛ք մետաղյա սեղմակով, կտրե՛ք անկյունը, վրան գրե՛ք «Վնասված է» և ստորագրե՛ք այն: Վնասված քվեաթերթիկը պահպանե՛ք առանձին:

✓ Եթե ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքը վերադարձնում է քվեաթերթիկը, հնարավոր է այն կրկին ներմուծել ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի մեջ: Եթե քվեաթերթիկը նորից վերադարձվի, ապա այն կհամարվի փսասված: Ընտրողի ներկայությամբ այնպես ծալե՛ք փսասված քվեաթերթիկը, որ անհնար լինի տեսնել ընտրական սուբյեկտներին, ծալված քվեաթերթիկն ամրացրե՛ք մետաղյա կապիչով, կտրե՛ք անկյունը, վրան գրե՛ք «Վնասված է» և ստորագրե՛ք այն: Վնասված քվեաթերթիկը պահպանե՛ք առանձին: Գրանցում իրականացնողին հանձնարարե՛ք փոխարինել ընտրողի փսասված քվեաթերթիկը նորով:

03
Ինչպես կառավարենք ընտրողների ստուգման և ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերի աշխատանքի ընթացքում հայտնաբերված տեխնիկական թերությունները

Առանց էլեկտրոնային միջոցների օգտագործման քվեարկության գործընթացի մասին որոշում կայացնելիս նախատեսվելիք հարցեր.

- ✓ Քվեարկության գործընթացի ընթացքում ընտրողների ստուգման և ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերի տեխնիկական թերություն հայտնաբերելու դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը որոշում է կայացնում քվեարկության գործընթացի ժամանակավոր ընդհատման մասին, ինչի մասին պարտավոր է անհապաղ տեղեկացնել ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:
- ✓ Եթե քվեարկության գործընթացն ընթանում էր ընտրողների ստուգման և ձայները հաշվելու մեկից ավելի հատուկ էլեկտրոնային սարքի կիրառմամբ և տեխնիկական թերության պատճառով դադարել է գործել դրանց մի մասը, նման դեպքում քվեարկության գործընթացը շարունակվում է ընտրողների ստուգման և ձայները հաշվելու մնացած գործող հատուկ էլեկտրոնային սարքի/սարքերի կիրառմամբ:
- ✓ Այն դեպքում, եթե անհնար լինի ընտրողների ստուգման/ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերով շարունակել քվեարկության գործընթացը, տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարն առանց համապատասխան սարքի/սարքերի կիրառման քվեարկությունը շարունակելու մասին ակտ է կազմում և համապատասխան գրառում է կատարում գործավարության մատյանում:

- ✓ Քվեարկության գործընթացը առանց ընտրողների ստուգման սարքի շարունակելու դեպքում առաջնորդվե՛ք տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների Ուղեցույց հրահանգի N2 հավելվածով, էջ 74-82:
- ✓ Առանց ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի կիրառման քվեարկության գործընթացը շարունակելու դեպքում առաջնորդվե՛ք տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների Ուղեցույց հրահանգի N2 հավելվածով, 74-75, 83-84:

04
Ինչպես պատրաստվենք շարժական քվեատուփով քվեարկության գործընթաց սկսելու համար և ինչ պետք է նախատեսենք շարժական քվեատուփը ընտրատեղամաս վերադարձնելու ժամանակ

- Շարժական քվեատուփի միջոցով քվեարկությունը սկսվում է ժամը 09:00-ից: Շարժական քվեատուփի միջոցով քվեարկության համար պատասխանատու հանձնաժողովի անդամներին/հատուկ խմբի անդամներին փոխանցե՛ք.
  - կապարակնքված շարժական քվեատուփը,
  - շարժական քվեատուփի ցուցակի հանձնաժողովի համար նախատեսված տարբերակը,
  - անհրաժեշտ քանակով քվեաթերթիկներ,
  - քվեաթերթիկը լրացնելու հատուկ նշիչներ (մարկերներ),
  - անհրաժեշտ քանակությամբ հատուկ շրջանակ-ծրարներ,
  - մետաղյա ամրակներ (ընտրողի կողմից քվեաթերթիկը հատուկ շրջանակ-ծրարի մեջ զետեղելուց հետո, մետաղյա ամրակով ամրացվում է և տեղադրվում քվեատուփի մեջ),
  - մետաղյա կապիչ (օգտագործվում է քվեաթերթիկը փսասելու դեպքում քվեարկության գաղտնիությունն ապահովելու համար),
  - նշմարումը ստուգելու ուլտրամանուշակագույն լապտեր,
  - նշմարման հեղուկ,
  - գրիչներ (շրջիկ քվեատուփի ցուցակում ընտրողի կողմից ստորագրություն արձանագրելու նպատակով),
  - շրջիկ քվեատուփի ճեղքի կապարակնիք:

- Շարժական քվեատուփի միջոցով քվեարկելիս՝ ավտոմեքենայից օգտվելու դեպքում ավտոմեքենայի մեջ տեղ տրամադրե՛ք քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանցից վիճակահանությամբ որոշված 2 դիտորդի համար (այսպիսինի առկայության դեպքում):

- Շարժական քվեատուփի միջոցով քվեարկությունն ավարտվում է ոչ ուշ, քան մինչև ժամը 19:00-ն, շարժական քվեատուփը ընտրական տեղամաս պետք է վերադարձվի ոչ ուշ, քան ժամը 20-ին:

- Շարժական քվեատուփը ընտրական տեղամաս վերադարձնելուն պես ցուցո՛ւմ տվեք հանձնաժողովի քարտուղարին ստուգել շարժական քվեատուփի ցուցակում առկա ստորագրությունների, չօգտագործված կամ/և փսասված քվեաթերթիկների թվի ճշտությունը: Անճշտության հայտնաբերման դեպքում՝ շարժական քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի անդամները/հատուկ խմբի անդամները պետք է բացատրագիր գրեն՝ պատճառի մատնանշմամբ:

  Բացատրագրում արտացոլված տվյալները նախատեսվում են քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը որոշելու և քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը լրացնելու նպատակների համար:

- Ընտրական տեղամասում մեկից ավելի շարժական քվեատուփ օգտագործելու դեպքում, ցուցո՛ւմ տվեք հատուկ խմբի անդամներին մասլ քվեարկության շենքում մինչև շարժական քվեատուփի մեջ եղած քվեաթերթիկները սահմանված կարգով ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի մեջ զետեղման ընթացակարգի ավարտը:

05
Ինչպես ու ինչ պարբերականությամբ հաշվառենք քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը (ընտրողների ակտիվությունը)

- Քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը (ընտրողների ակտիվությունը) որոշելու նպատակով գրանցում իրականացնողներից մեկին ցուցո՛ւմ տվեք ընտրողների ստուգման սարքից ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00-ին, 17:00-ին տպել ընտրողների ակտիվությունն արտացոլող կտրոն/հաշվետվություն:
- Համապատասխան ժամանակահատվածի համար (ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00-ին, 17:00-ին) քվեարկությանը/ ընտրություններին մասնակցած ընտրողների թվին գումարե՛ք շարժական քվեատուփի ցուցակում (այսպիսինի առկայության դեպքում) գրանցված ստորագրությունների գումարը և պլանշետով ապահովե՛ք նշված տվյալների փոխանցումը ԿԸՀ:

  Քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների քանակի (ակտիվության) մասին տեղեկությունը ԿԸՀ ուղարկելու գործընթացի նկարագրությունը տեսե՛ք՝ էջ 32, Սխեմա N7:

Սխեմա N7. Քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների թվի (ակտիվության) մասին տեղեկությունը ԿԸՀ ուղարկելու գործընթացի նկարագրդում



{I}

Սեղմե՛ք բացվող համատեքստային մենյուն։



{II}

Ծրագրի մենյուի մեջ սեղմե՛ք «Ակտիվություն» կոճակը։

{III}

Ընտրե՛ք համապատասխան ժամանակի ցուցիչ ակտիվ դաշտը:



{IV}

Սյունակում մուտքագրե՛ք համապատասխան ժամանակահատվածի համար որոշված քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների թիվը և ընտրե՛ք «Ուղարկել» կոճակը:

{V}

Ուղարկված տվյալը կարտացոլվի համապատասխան ժամանակահատվածի ակտիվության սյունակում:



06
Ինչպես պատրաստվենք քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացին

Ընտրատեղամասը փակելուց մինչև քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմումն իրականացվելիք ընթացակարգերի կազմակերպված անցկացումը կապված է հետևյալ հիմնական աշխատանքների իրականացման հետ.

- ✓ ընտրատեղամասը փակել,
- ✓ ավարտել ստուգման գործընթացը ստուգող սարքերում,
- ✓ բացել շրջիկ քվեատուփը և քվեաթերթիկները հիմնական քվեատուփի մեջ տեղադրել ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի միջոցով,
- ✓ ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքից նախնական արդյունքների մասին համախմբված քաղվածք տպել և հրապարակել,
- ✓ ընտրատեղամասը կազմակերպել ձայները հաշվելու ընթացակարգի համար,
- ✓ վիճակահանությամբ որոշել հաշվողներին,
- ✓ ապահովել ձայները հաշվելու գործընթացում դիտորդներից որոշված վերահսկողների, ընտրական սուբյեկտների ներկայացուցիչների ներգրավվածություն,
- ✓ մինչև հաշվողների կողմից հիմնական քվեատուփերը բացելը կապարակնքել համապատասխան ընտրական փաստաթղթերը,
- ✓ բացել հիմնական քվեատուփերը,
- ✓ հաշվողները քվեաթերթիկները տեսակավորեն, հաշվեն և կապարակնքեն:

Ընտրական տեղամասը փակվելուց մինչև քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմումը իրականացվելիք ընթացակարգերն իրականացնելու համար առաջնորդվե՛ք տրված մանրամասն նկարագրությամբ:

Ընտրատեղամասը փակվելուց մինչև քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություն կազմելը ժամանակահատվածում իրականացվելիք հիմնական ակտիվությունների մանրամասն նկարագրություն

- ☐ Քվեարկության ընթացակարգն ավարտվում է և քվեարկության շենքը փակվում է ժամը 20:00-ին: Այս պահի դրությամբ հերթում կանգնած ընտրողները կարող են քվեարկել: Հանձնաժողովի անդամներից մեկին հանձնարարե՛ք հաշվառել հերթում կանգնած ընտրողների ազգանունները, անունները և Ձեզ հայտնել քանակը: Հենց որ վերջին ընտրողը կքվեարկի, քվեարկությունը հայտարարե՛ք ավարտված:
- ☐ Գրանցում իրականացնողներին ցուցո՛ւմ տվեք կապարակնքել ընտրողների ստուգումը հավաստող կտրոնները տեղադրելու համար նախատեսված անթափանց տուփերի ճեղքերը:
- ☐ Հանձնարարե՛ք հանձնաժողովի քարտուղարին գործավարության մատյանի 26-րդ և 27-րդ էջերում նշել քվեները հաշվելու ժամանակ քվեարկության շենքում գտնվող անձանց տվյալները:

  Քվեարկության շենքը փակվելուց հետո քվեարկության շենք մտնելու և քվեարկության շենքը լքելու իրավունք ունեն քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք:
- ☐ Քվեարկության գործընթացն ավարտվելուց հետո գրանցում իրականացնողներից որևէ մեկին հանձնարարե՛ք իրեն փոխանցված ստուգող սարքից տպել ընտրողների ընդհանուր քանակն արտացոլող վերջնական կտրոնը/հաշվետվությունը:
- ☐ Տպված վերջնական հաշվետվությունը փոխանցե՛ք հանձնաժողովի քարտուղարին պահպանելու համար:
- ☐ Պլանշետով ապահովե՛ք ԿԸՀ քվեարկությանը/ ընտրություններին մասնակցած ընտրողների վերջնական քանակի մասին տվյալների փոխանցումը, այդ թվում գենդերային կտրվածքում:

Սխեմա N8. Քվեարկությանը/ընտրություններին մասնակցած ընտրողների վերջնական քանակի (ակտիվության) մասին տեղեկությունները ԿԸՀ փոխանցելու նկարագրությունը, այդ թվում գենդերային կտրվածքում:



{I}

Սեղմե՛ք բացվող համատեքստային մենյուն:

{II}

Ծրագրի մենյուի մեջ ընտրե՛ք «Ակտիվություն» կոճակը:

{III}

Ընտրե՛ք համապատասխան ժամանակի ցուցիչ ակտիվ դաշտը:



{IV}

Սյունակի մեջ մուտքագրե՛ք քվեարկությանը/ ընտրություններին մասնակցած ընտրողների ընդհանուր քանակը և ընտրե՛ք «Ուղարկել» կոճակը:

Նույն կերպ մուտքագրե՛ք և ուղարկե՛ք գենդերային տվյալները:

{V}

Ուղարկված տվյալը կարտացոլվի համապատասխան սյունակներում:

- Ստուգման սարքերում ավարտե՛ք ստուգման գործընթացը:

Սխեմա N9. Սարքերում ստուգման գործընթացի ավարտի փուլերի նկարագրադում

{I} Ընտրե՛ք «Վերադառնալ մենյու» կոճակը:

{II} Մենյուի մեջ ընտրե՛ք «Փակել ստուգումը» կոճակը։



{III} Կրկնական ընտրե՛ք «Փակել ստուգումը» կոճակը։



{IV} Ստուգման գործընթացը փակելու նպատակով մուտքագրե՛ք անհատական կոդը։

{V} Ստուգման գործընթացը փակելուն պես ավտոմատ ռեժիմում տպվում է վերջնական հաշվետվություններն արտացոլող կտրոն։

{VI} Ընտրե՛ք «Անջատել սարքը» կոճակը և անջատե՛ք սարքերը։



- Ստուգե՛ք շրջիկ քվեատուփի (այսպիսինի գոյության դեպքում) կապարակնիքների ամբողջականությունը։

  Եթե շարժական քվեատուփի կապարակնիքի ամբողջականությունը խախտված լինի, բայց հանձնաժողովը համարի, որ դա չի առաջացրել օրենքի պահանջների խախտում, հանձնաժողովի կարգադրությամբ շարունակվում է քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգը (տվյալ փաստի վերաբերյալ անհապաղ տեղեկացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին)։ Հակառակ դեպքում, քվեատուփը կապարակնքվում է և տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրության հետ միասին անհապաղ փոխանցվում վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին։

- Եթե շարժական քվեատուփի կապարակնիքի ամբողջականության խախտում չի բացահայտվի, շրջիկ քվեատուփի մեջ եղած քվեաթերթիկները ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի միջոցով զետեղե՛ք հիմական քվեատուփերից որևէ մեկի մեջ այնպես, որ անհնար լինի տեսնել ընտրողի կողմից կատարված ընտրությունը։

Այն դեպքում, եթե.

- ✓ շարժական քվեատուփից հանված հատուկ շրջանակ-ծրարում լինի սահմանված քանակից ավելի քվեաթերթիկ, այսպիսի քվեաթերթիկները առանձին կդրվեն, վրան կգրվի անվավերության

հիմքը՝ «Ավել քվեաթերթիկ», և կավելացվի հիմնական քվեատուփի մեջ հայտնաբերված անվավեր քվեաթերթիկների քանակին,

✓ ձայների հաշվման էլեկտրոնային հատուկ սարքը վերադարձնի շարժական քվեատուփից հանված քվեաթերթիկը, այդպիսի քվեաթերթիկը կտեղադրվի առանձին այնպես, որ հնարավոր չլինի տեսնել ընտրողի կատարած ընտրությունը և այնուհետև կխառնվի հիմնական քվեատուփերից հաշվելու նպատակով հանված քվեաթերթիկների հետ։

Վերոնշյալ դեպքերը հայտնաբերելու ժամանակ հանձնաժողովի քարտուղարը կազմում է փաստը մատնանշող ակտ, որը հանձնաժողովի նախագահի հետ ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները և հատուկ խմբի անդամները (այսպիսինի առկայության դեպքում)։

✓ Եթե շարժական քվեատուփի մեջ հայտնաբերվի այլ ընտրական տեղամասի համար հատկացված կամ չսահմանված նմուշի քվեաթերթիկ, այսպիսի քվեաթերթիկն առանձին կդրվի։ Այլ տեղամասի համար հատկացված քվեաթերթիկները համարվում են անվավեր, կապվում առանձին փաթեթով, դրանց քանակը չի նշվում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ և նշվում է միայն գործավարության մատյանում։

☐ Շարժական քվեատուփում գտնվող քվեաթերթիկները հիմնական քվեատուփում զետեղելու ընթացակարգն ավարտելուց հետո, ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքերում փակե՛ք քվեարկության գործընթացը։

Սարքերից որևէ մեկից տպե՛ք նախնական արդյունքների մասին համախմբված քվեարկության նախնական արդյունքները և տեղեկությունները, ԿԸՀ փոխանցելու նպատակով, տեղափոխե՛ք արտաքին հիշողության քարտի վրա։

Սխեմա N10. Սարքերում քվեարկության գործընթացը փակելու, արդյունքների համաժամացման և համախմբման փուլերի նկարագրադում

{I} Սարքերի կորպուսի վրա եղած ճեղքի մեջ հատուկ բանալու ներմուծմամբ տեղափոխվե՛ք ծրագրի կառավարման վահանակ։

{II} Սարքերի մեջ սկսվում է կառավարման վահանակի ներբեռնում, այն տևում է մի քանի վայրկյան։

{III} Քվեարկության գործընթացը փակելու նպատակով սարքերի էկրանի վրա ընտրե՛ք «Նախագահ» կոճակը:

{IV} Սարքերի մեջ մուտքագրե՛ք անհատական կոդը:



{V} Սարքերի էկրանի վրա ընտրե՛ք «Քվեարկության գործընթացի փակում» կոճակը և փակելը հաստատելու համար կրկին մուտքագրե՛ք անհատական կոդը:



{VI} Ընտրե՛ք «Ավարտել» և հաստատե՛ք քվեարկության գործընթացի ավարտը:

{VII} Սարքերի միջև տվյալների փոխանակման նպատակով (տվյալները համագումարելու՝ համաժամացման համար) հանձնաժողովի նախագահն ընտրում է «Արդյունքների համաժամացում» կոճակը:

{VIII} Սարքերի մեջ մուտքագրե՛ք անհատական կոդը:

{IX} Սարքերը ավտոմատ ռեժիմով իրականացնում են համաժամացման գործընթացը (տվյալների փոխանակումը)։



{X} Համաժամացման գործընթացն ավարտելուց հետո սկսե՛ք արդյունքների համախմբում։

{XI} Սարքի էկրանին կհայտնվի հաղորդագրություն, թե քանի սարքի տվյալներ են համախմբվել: Այնուհետև երկու օրինակով ավտոմատ ռեժիմով տպվում է քվեարկության նախնական արդյունքների մասին քաղվածք:



{XII} Ձայների հաշվման սարքի այն համապատասխան բաժնում, որտեղից տպվել է համախմբված հաշվետվությունը, միացրե՛ք արտաքին հիշողության քարտ, որի վրա ավտոմատ կերպով գրանցվում են արդյունքների համախմբված տվյալները:



{XIII} Արդյունքներն արտաքին հիշողության քարտի վրա գրանցելուց հետո ընտրե՛ք «Անջատել համակարգը» կոճակը:

{XIV} Սեղմե՛ք «Այո» կոճակը և անջատե՛ք սարքերը:

Եթե ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքից չի տպվի ընտրողի ստուգումը հաստատող կտրոն կամ կտպվի տեխնիկական խոտանով կտրոն, այս դեպքում անխափան շարունակվում են ձայները հաշվելու և քվեարկության արդյունքները ամփոփիչ արձանագրությունը կազմելու ընթացակարգերը:

- Նախնական արդյունքների մասին համախմբված քաղվածքը ստորագրե՛ք հանձնաժողովի քարտուղարի հետ, վավերացրե՛ք հանձնաժողովի կնիքով: Նախնական արդյունքների մասին համախմբված քաղվածքի մեկ օրինակը պահպանման համար փոխանցե՛ք հանձնաժողովի քարտուղարին, մյուս օրինակը փակցրե՛ք քվեարկության շենքում հանրային ծանոթացման համար:

- Նախնական արդյունքների մասին համախմբված քաղվածքի հետ տեսանելի տեղում փակցրե՛ք տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կազմված ակտի վավերացված պատճենը (այսպիսինի առկայության դեպքում), որը կազմվել է շարժական քվեատուփից քվեաթերթիկները հիմական քվեատուփում զետեղման գործընթացում բացահայտված հանգամանքների պատճառով (սարքը վերադարձրել է շարժական քվեատուփից հանված քվեաթերթիկը, շարժական քվեատուփից հանված հատուկ շրջանակ-ծրարում հայտնաբերվել են սահմանված թվից ավելի քվեաթերթիկներ):

- Պլանշետի միջոցով ապահովե՛ք նախնական արդյունքների մասին համախմբված քաղվածքում նշված տվյալների տրամադրում ԿԸՀ-ին:

  Քվեարկության արդյունքների մասին համախմբված քաղվածքում նշված տվյալների ԿԸՀ-ին ուղարկելու գործընթացի նկարագրությունը տեսե՛ք՝ էջ 53, Սխեմա N11:

Սխեմա N11. Քվեարկության նախնական արդյունքների վերաբերյալ տվյալների ԿԸՀ փոխանցման գործընթացի նկարագրում

{I} Պլանշետի մեջ ներբեռնված հավելվածը ակտիվացնելու նպատակով սեղմե՛ք պատկերակը։

{II} Պլանշետի մեջ սկսվում է ծրագրի ներբեռնումը, տևում է մի քանի վայրկյան։

{III} Մուտքագրե՛ք հատուկ, անհատական կոդը։

{IV} Ընտրե՛ք «Սկսել փոխանցել» կոճակը։

{V} Հիշողության քարտը կապակցե՛ք պլանշետի հետ և ընտրե՛ք «Փոխանցել» կոճակը:

{VI} Նախնական համախմբած արդյունքների փոխանցման գործընթացը տևում է մի քանի վայրկյան:

{VII} Ընտրե՛ք «Ավարտել» կոճակը, ինչից հետո պլանշետի մեջ ավարտվում է արդյունքների փոխանցման գործընթացը:



Այն դեպքում, եթե ընտրական տեղամասում.

- ✓ Արձանագրվել է պլանշետի տեխնիկական խոտան (նախնական արդյունքների փոխանցման հավելվածի հետ կապված խնդիր է առաջացել կամ այլ բան), և հնարավոր չի եղել շտկել խոտանը, նախնական արդյունքների մասին համախմբված քաղվածքում նշված տվյալների մասին տեղեկությունները Ձեր կողմից սահմանված անձի տրամադրության տակ գտնվող այլ տեխնիկական միջոցով (օրինակ՝ սմարթֆոն) ուղարկե՛ք ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից նախօրոք սահմանված անձին կամ ԿԸՀ համապատասխան իրավազոր անձին (Ընտրական գործընթացների կառավարման դեպարտամենտի աշխատակից):
- ✓ Եթե ընտրական տեղամասում չկա բջջային կապի և ինտերնետի շարունակական միացում, նման դեպքում նախնական արդյունքների մասին համախմբված քաղվածքում նշված տվյալների մասին տեղեկությունը ԿԸՀ կարող է ուղարկվել քվեարկության շենքի արտաքին պարագծից:
- ☐ Ձայները հաշվելու ընթացակարգը սկսելու նպատակով անցկացրե՛ք վիճակահանություն չորս հաշվող որոշելու համար:
- ☐ Անցկացրե՛ք վիճակահանություն քվեարկության շենքում գտնվող ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներից ոչ ավելի, քան 2 ներկայացուցիչ որոշելու համար, որոնք հաշվողների հետ միասին

մասնակցում են վավեր կամ/և անվավեր քվեաթերթիկները հաշվելու գործընթացին:

Վիճակահանությանը չեն մասնակցում այն ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները, որոնց կողմից նշանակված հանձնաժողովի անդամները հանդիսանում են վիճակահանությամբ որոշված հաշվողներ:

- Դիտորդների շրջանում 2 վերահսկող որոշելու համար վիճակահանություն անցկացրե՛ք այն դեպքում, եթե դիտորդները իրենց կազմից փոխհամաձայնությամբ չեն կարող որոշել քվեաթերթիկները հաշվելու գործընթացի վերահսկողներ:
- Տեղամասը պատրաստե՛ք ձայները հաշվելու ընթացակարգի համար, հաշվողների սեղանին մոտեցրե՛ք.
  - շարժական քվեատուփի ցուցակը (այսպիսինի առկայության դեպքում),
  - գրանցում իրականացնողների մոտ եղած չօգտագործված քվեաթերթիկները,
  - փնասված քվեաթերթիկները,
  - հիմնական քվեատուփերը:
- Հանձնաժողովի քարտուղարին ցուցո՛ւմ տվեք առանձին-փաթեթների մեջ տեղադրել.
  - շարժական քվեատուփի ցուցակը (այսպիսինի առկայության դեպքում),
  - փնասված քվեաթերթիկները,
  - գրանցում իրականացնողների մոտ եղած չօգտագործված քվեաթերթիկները (մինչև փաթեթի մեջ զետեղելը հանձնաժողովի քարտուղարը կտրում է տվյալ քվեաթերթիկների անկյունը):
- Կապարակնքված փաթեթները, կապարակնքման գծի վրա ստորագրե՛ք հաշվողների հետ:
- Ստուգե՛ք հիմնական քվեատուփերի կապարակնիքների ամբողջականությունը: Եթե ամեն ինչ կարգին լինի, բացե՛ք հիմնական քվեատուփերը:

  Եթե քվեատուփերը ստուգելիս պարզվի, որ կապարակնիքի ամբողջականությունը խախտված է, բայց հանձնաժողովը համարի, որ

դա չի առաջացրել օրենքի պահանջների խախտում, հանձնաժողովի կարգադրությամբ շարունակվում է քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգը (տվյալ փաստի վերաբերյալ անհապաղ տեղեկացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը): Հակառակ դեպքում, քվեատուփը կապարակնքվում է և հանձնաժողովի կարգադրության հետ միասին անհապաղ փոխանցվում վերադաս ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

- Հաշվողներին ցուցո՛ւմ տվեք իրար խառնել հիմնական քվեատուփից դատարկած քվեաթերթիկները և սկսել քվեաթերթիկները տեսակավորելու և հաշվելու գործընթացը:
- Քվեաթերթիկների տեսակավորումից հետո հաշվողներին ցուցո՛ւմ տվեք հաշվել. անվավեր համարված քվեաթերթիկները, յուրաքանչյուր ընտրական սուբյեկտին տրված ձայները:
- Հայտարարե՛ք յուրաքանչյուր ընտրական սուբյեկտի ստացած ձայների և անվավեր քվեաթերթիկների քանակը: Հանձնաժողովի քարտուղարի հետ ստուգե՛ք տվյալների ճշգրտությունը:

  Եթե քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվն ավել է ընտրական սուբյեկտների կողմից ստացված ձայների և անվավեր քվեաթերթիկների գումարից, հաշվողներին ցուցո՛ւմ տվեք կրկին հաշվել տվյալները:
- Քվեաթերթիկները հաշվելուց հետո ցուցո՛ւմ տվեք հաշվողներին առանձին-առանձին փաթեթներով կապարակնքել.
  - անվավեր քվեաթերթիկները,
  - այլ ընտրական տեղամասի համար հատկացված անվավեր քվեաթերթիկները (այսպիսինի առկայության դեպքում). այլ ընտրատեղամասի համար հատկացված անվավեր քվեաթերթիկների թիվը նշվում է միայն գործավարության մատյանում,
  - ընտրական սուբյեկտներին պատկանող քվեաթերթիկների տրցակները:
- Կապարակնքված փաթեթները ստորագրե՛ք հաշվողների հետ:

07
Ինչ պետք է նկատի ունենանք քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության առնչությամբ

Ընտրական տեղամասի քվեարկության արդյունքները հաստատվում են միայն Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի համաձայն կազմված տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությամբ:

- Հանձնաժողովի քարտուղարը, Ձեզ հետ համաձայնեցմամբ, լրացնում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը: Հանձնաժողովի բոլոր անդամները պարտավոր են ստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը, ինչով հավաստվում է նրանց ներկա գտնվելը ընտրական տեղամասում: Տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից կազմված քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունն իրավաբանական ուժ ունի, եթե այն ստորագրել է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների մեծամասնությունը:

  Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմելու հետ կապված մանրամասն կանոնակարգը տեսե՛ք Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների Ուղեցույց հրահանգում, էջ 60-63, «Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմումը» ենթագլխում:

- Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճենն անհապաղ, պլանշետի միջոցով ուղարկե՛ք ԿԸՀ:

  Ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճենի հետ ԿԸՀ է ուղարկվում նաև ամփոփիչ արձանագրության ուղղման արձանագրության, տարբերվող կարծիքի փաստաթղթի, հանձնաժողովի անդամների բացատրագրերի և շարժական քվեատուփի մեջ եղած քվեաթերթիկները հիմնական քվեատուփի մեջ զետեղելու ժամանակ հանձնաժողովի կազմած ակտի ֆոտոպատճենը՝ այսպիսի փաստաթղթերի առկայության դեպքում:

Սխեմա N12. Ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճենը ԿԸՀ ուղարկելու գործընթացի փուլերի նկարագրում

{I}

Սեղմե՛ք բացվող համատեքստային մենյուն

{II}

Ծրագրի մենյուի մեջ ընտրե՛ք «Արձանագրություն» կոճակը:

{III}

Ընտրե՛ք ամփոփիչ արձանագրության տեսակը՝ «Համամասնական» կոճակը





{IV}

Արձանագրության ֆոտոպատճենը լուսանկարելու նպատակով ընտրե՛ք լուսանկարչական սարք արտացոլող կոճակը:



{V}

Պլանշետի լուսանկարչական խցիկի օբյեկտիվում ամբողջությամբ պետք է երևա ամփոփիչ արձանագրությունը: Ընտրե՛ք «Լուսանկարել» կոճակը:



{VI}

Ամփոփիչ արձանագրության ֆոտոպատճենն ուղարկելու նպատակով սեղմե՛ք «Ուղարկել» կոճակը:

Եթե ընտրական տեղամասում.

✓ Արձանագրվի պլանշետի տեխնիկական խոտան (խնդիր է առաջացել ԿՀՀ հավելվածի հետ, որի միջոցով ուղարկվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը) և հնարավոր չի եղել ուղղել թերությունը, էլեկտրոնային կառավարման համակարգում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության վերբեռնումն ապահովում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, իրեն այլ ընտրական փաստաթղթերի հետ ամփոփիչ արձանագրությունը փոխանցելուց հետո:

✓ Չկա բջջային կապի և ինտերնետի անխափան միացում, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության պատճենը ԿՀՀ-ին կարող է տրամադրվել քվեարկության շենքի արտաքին պարագծից, կամ էլեկտրոնային կառավարման համակարգում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության վերբեռնումն ապահովում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, իրեն այլ ընտրական փաստաթղթերի հետ ամփոփիչ արձանագրությունը փոխանցելուց հետո:

☐ Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության վավերացված ֆոտոպատճենը հանրային ծանոթացման համար փակցրե՛ք քվեարկության շենքում:

☐ Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության և ուղղման արձանագրության (այսպիսինի առկայության դեպքում) ֆոտոպատճենները տրամադրելիս (պահանջելու դեպքում)՝ ստորագրե՛ք հանձնաժողովի քարտուղարի հետ և վավերացրե՛ք հանձնաժողովի հատուկ կնիքով:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության/ անճշտություններն ուղղելու արձանագրության հետ կապված հանձնաժողովի անդամների բացատրագրերը (այսպիսինի առկայության դեպքում), պահանջի հիման վրա, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կողմից հատկացվում են պահանջելուց հետո, 2-օրյա ժամկետում:

☐ Բոլոր ընթացակարգերն՝ ավարտելուց հետո հանձնաժողովի քարտուղարի հետ փակե՛ք գրանցամատյանը և գործավարության մատյանը, վավերացրե՛ք ստորագրություններով և տեղամասային ընտրական հանձնաժողովիհատուկ կնիքով:

- Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին ընտրական փաստաթղթերը, էլեկտրոնային սարքերը և այլ գույք վերահանձնելու նպատակով կապարակնքե՛ք գործավարության մատյանն ու դրա հետ մեկտեղ.
  - դիմումները /բողոքները (այսպիսինի առկայության դեպքում),
  - ընտրողների ստուգման սարքից տպված նախնական հաշվետվությունները և սարքից տպված վերջնական հաշվետվությունը,
  - ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքերից տպված «զրոյական քաղվածքները» և սարքից նախնական արդյունքների մասին համախմբված քաղվածքը։
- Գործավարության մատյանի կապարակնքված փաթեթը ստորագրե՛ք հանձնաժողովի քարտուղարի հետ։
- Կապարակնքե՛ք հանձնաժողովի հատուկ կնիքը։ Հանձնաժողովի հատուկ կնիքի կապարակնքված փաթեթը ստորագրում են հանձնաժողովի բոլոր ներկա գտնվող անդամները։